

«Վտանգավոր նյութերի առկայությամբ պայմանավորված՝ խոշոր վթարների վտանգները վերահսկելու մասին» Խորհրդի 96/82/ԵՀ հրահանգը փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 16-ի 2003/105/ԵՀ հրահանգ

Պաշտոնական տեղեկագիր L 345 , 31.12.2003թ., էջեր 0097 - 0105

«Վտանգավոր նյութերի առկայությամբ պայմանավորված՝ խոշոր վթարների վտանգները վերահսկելու մասին» Խորհրդի 96/82/ԵՀ հրահանգը փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 16-ի 2003/105/ԵՀ հրահանգ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը(2),

Տարածաշրջանային հարցերով կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն և հաշվի առնելով Համաձայնեցման կոմիտեի կողմից 2003(3) թվականի հոկտեմբերի 22-ին հաստատված համատեղ տեքստը,

Քանի որ

1) 96/82/ԵՀ (4) հրահանգը նպատակաուղղված է վտանգավոր նյութերի առկայությամբ պայմանավորված՝ խոշոր վթարների կանխմանը, ինչպես նաև մարդու և շրջակա միջավայրի վրա դրանց հետևանքների սահմանափակմանը՝ Համայնքի ողջ տարածքում հետևողական և արդյունավետ կերպով պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու համար,

2) հաշվի առնելով արդյունաբերական վերջին վթարները և Խորհրդի պահանջով Հանձնաժողովի կողմից իրականացված՝ քաղցկեղածին և շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութերի վերաբերյալ ուսումնասիրությունները, 96/82/ԵՀ հրահանգի գործողության ոլորտը պետք է ընդլայնվի,

3) ցիանիդի արտահոսքը, որն աղտոտել էր Դանուբը 2000 թվականի հունվարին Բայա Մարում՝ Ռումինիայում, տեղի ունեցած վթարից հետո, ցույց տվեց, որ պահեստավորման և մշակման գործողությունները որոշ հանքերում, մասնավորապես, պոչանքների հեռացման և վնասագերծման կառուցվածքներում, այդ թվում՝ պոչանքների ավազաններում կամ ամբարտակներում, ունեն լուրջ հետևանքներ առաջացնելու հավանականություն: Հանքարդյունահանման աշխատանքների անվտանգ իրականացման և շրջակա միջավայրի վերաբերյալ՝ Եվրոպական համայնքի գործողությունների վեցերորդ ծրագրի մասին Հանձնաժողովի հաղորդագրություններում, այսպիսով, շեշտվել է 96/82/ԵՀ հրահանգի գործողության ոլորտի ընդլայնման անհրաժեշտությունը: Եվրոպական պառլամենտը «Հանքարդյունահանման աշխատանքների անվտանգ իրականացման մասին Հանձնաժողովի հաղորդագրության մասին» 2001 թվականի հուլիսի 5 (5)–ի բանաձևում

ողջունեց այդ հրահանգի գործողության շրջանակի ընդլայնումը՝ ընդգրկելով այն վտանգները, որոնք կարող են առաջանալ հանքերում պահեստավորման և մշակման գործողությունների հետևանքով (4): Արդյունահանող արդյունաբերությունների հետևանքով առաջացած թափոնների կառավարման մասին հրահանգ ընդունելու առաջարկը կարող է համապատասխան շրջանակ լինել թափոնների գործածության այնպիսի օբյեկտների վերաբերյալ միջոցառումներ սահմանելու համար, որոնք վթարի վտանգ են ներկայացնում, սակայն չեն կարգավորվում սույն Հրահանգով, 5) «հրագործական արտադրանքի պահեստի պայթյունը», որը տեղի էր ունեցել 2000 թվականի մայիսին Նիդեռլանդների Էնսհեդե քաղաքում, ցույց տվեց, որ հրագործական և պայթուցիկ նյութերի պահեստավորումն ու արտադրությունը խոշոր վթարների պատճառ կարող է լինել: 96/82/ԵՀ հրահանգում նշված նման նյութերի սահմանումը պետք է պարզաբանել և պարզեցնել: (6) 2001 թվականի սեպտեմբերին Թուրուզում պարարտանյութերի գործարանի պայթյունը բարձրացրեց տեղեկացվածությունը ամոնիումի նիտրատի և ամոնիումի նիտրատի հիմքով պարարտանյութերի պահեստավորման, մասնավորապես, արտադրական պրոցեսի ժամանակ խոտանված կամ արտադրողին վերադարձված (մասնագրերին/սպեցիֆիկացիաներին չհամապատասխանող) նյութերի պահեստավորման հետևանքով առաջացող պոտենցիալ վթարների մասին: 96/82/ԵՀ հրահանգում նշված ամոնիումի նիտրատի և ամոնիումի նիտրատի հիմքով պարարտանյութերի գոյություն ունեցող տեսակներն այդ պատճառով պետք է վերանայել՝ ներառելով մասնագրերին/սպեցիֆիկացիաներին չհամապատասխանող նյութերը,

7) 96/82/ԵՀ հրահանգը չպետք է կիրառվի վերջնական օգտագործողների այն վայրերի նկատմամբ, որտեղ ժամանակավորապես՝ մինչև վերամշակման կամ վերացման համար հեռացնելը, առկա են ամոնիում նիտրատը և ամոնիում նիտրատի հիմքով պարարտանյութերը, որոնք տրամադրման ժամանակ համապատասխանում էին այդ հրահանգում նշված մասնագրերին/սպեցիֆիկացիաներին, սակայն աստիճանաբար վատթարացել կամ աղտոտվել են, 8) Հանձնաժողովի կողմից անդամ երկրների հետ սերտ համագործակցությամբ իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս համապատասխան հատուկ քանակություններով քաղցկեղածին նյութերի ցուցակի ընդլայնման և 96/82/ԵՀ հրահանգում՝ շրջակա միջավայրի համար որպես վտանգավոր նշված նյութերի հատուկ քանակությունների զգալիորեն նվազեցման անհրաժեշտությունը,

9) 96/82/ԵՀ հրահանգի գործողության ոլորտում ընդգրկված ձեռնարկությունների դեպքում, ցույց է տրվել, որ անհրաժեշտ է սահմանել ծանուցումների նվազագույն ժամկետներ և մշակել խոշոր վթարների կանխարգելման մեթոդաբանություններ, անվտանգության վերաբերյալ հաշվետվություններ ու արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրեր,

10) ձեռնարկությունում համապատասխան աշխատակազմի փորձը և գիտելիքը կարող են մեծապես նպաստել արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրերի նախագծմանը, իսկ ձեռնարկությունում գտնվող ամբողջ անձնակազմը և ներգործության ազդեցությանը ենթակա անձինք պետք է պատշաճորեն տեղեկացված լինեն անվտանգության միջոցառումների և գործողությունների մասին, 11) «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին աջակցելու նպատակով ընդլայնված համագործակցության Համայնքի մեխանիզմ սահմանող՝ Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի 2001/792/ԵՀ, Եվրատոմ հրահանգի (6) ընդունմամբ շեշտվում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման հարցում ընդլայնված համագործակցությանն աջակցելու անհրաժեշտությունը,

12) հողօգտագործման պլանավորմանը աջակցելու նպատակով անհրաժեշտ է ուղեցույցներ մշակել՝ սահմանելով տվյալների բազա, որը կարելի է օգտագործել 96/82/ԵՀ հրահանգով կարգավորվող ձեռնարկությունների և այդ հրահանգի 12(1) հոդվածում նկարագրված տարածքների միջև համատեղելիությունը գնահատելիս,

13) 96/82/ԵՀ հրահանգով կարգավորվող ձեռնարկությունների վերաբերյալ նվազագույն տեղեկությունները Հանձնաժողովին տրամադրելը պետք է պարտականություն լինի անդամ պետությունների համար,

14) միևնույն ժամանակ անհրաժեշտ է պարզաբանել 96/82/ԵՀ հրահանգի որոշ պարբերություններ,

15) սույն Հրահանգում նախատեսված միջոցառումները շահագրգիռ անձանց հետ անցկացվող հանրային լուսնային/քննարկումների առարկան են եղել, 16) պետք է համապատասխանաբար փոփոխություններ կատարել 96/82/ԵՀ հրահանգում,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Սույնով 96/82/ԵՀ հրահանգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 4-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) (ե) և (զ) կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ե) հանքանյութերի օգտագործում/շահագործում (հետախուզում/երկրաբանական որոնում, արդյունահանում և մշակում) հանքավայրերում, քարհանքներում կամ հորատներում՝ բացառությամբ I հավելվածում սահմանված՝ վտանգավոր նյութերի քիմիական և ջերմային մշակման պրոցեսների ու այդ պրոցեսների հետ կապված պահեստավորման.

զ) հանքանյութերի և այդ թվում՝ ածխաջրածինների հետախուզում/երկրաբանական որոնում ու օգտագործում/շահագործում ծովում.».

բ) ավելացնել հետևյալ կետը՝

«է) թափոններով լցված հողատարածքները՝ բացառությամբ գործող պոչանքների հեռացման և վնասագերծման կառուցվածքների, այդ թվում՝ I հավելվածում սահմանված վտանգավոր նյութեր պարունակող պոչանքների ավազանների կամ ամբարտակների, մասնավորապես, երբ դրանք օգտագործվում են հանքանյութերի քիմիական կամ ջերմային մշակման համար:»:

2. 6-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) 1-ին պարբերության մեջ ավելացնել հետևյալ պարբերությո՞ւյթը՝

«- սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ հետագայում ներգրավման ենթակա ձեռնարկությունների դեպքում՝ 2(1) հոդվածի առաջին ենթապարբերությամբ սահմանված կարգով համապատասխան ձեռնարկության նկատմամբ սույն Հրահանգի կիրառման օրվանից՝ երեք ամսվա ընթացքում:»:

բ) 6(4) հոդվածի առաջին պարբերությո՞ւյթից հետո ավելացնել հետևյալ պարբերությո՞ւյթը՝

«- որևէ ձեռնարկության կամ օբյեկտի ձևափոխության դեպքում, որն էական ազդեցություն կարող է ունենալ խոշոր վթարի վտանգի վրա կամ:»:

3. 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ պարբերությամբ՝

«1ա. սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ հետագայում ներգրավման ենթակա ձեռնարկությունների դեպքում՝ 1-ին պարբերության մեջ նշված փաստաթուղթը պետք է կազմվի անհապաղ, սակայն բոլոր դեպքերում տվյալ ձեռնարկության նկատմամբ սույն Հրահանգի կիրառման օրվանից՝ երեք ամսվա ընթացքում՝ 2(1) հոդվածի առաջին ենթապարբերության համաձայն:»:

4. 8 (2) (բ) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ) նախատեսվի համագործակցություն՝ հասարակությանը տեղեկացնելու և արտաքին արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրերի կազմման համար պատասխանատու մարմինն տեղեկատվություն տրամադրելու գործում:»:

5. 9-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) 2-րդ պարբերության առաջին ենթապարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Անվտանգության վերաբերյալ հաշվետվությունը պետք է պարունակի առնվազն II հավելվածում թվարկված տվյալները և տեղեկությունները: Դրանում պետք է նշվեն հաշվետվության կազմման գործընթացում ներգրավված համապատասխան կազմակերպությունների անունները: Այն պետք է նաև ձեռնարկությունում առկա վտանգավոր նյութերի թարմացված ցանկ պարունակի:»:

բ) 3-րդ պարբերության երրորդ և չորրորդ պարբերությունների միջև ավելացնել հետևյալ պարբերությամբ.

«-սույն Հրահանգի գործողության ոլորտում հետագայում ներգրավման ենթակա ձեռնարկությունների դեպքում՝ 2(1) հոդվածի առաջին ենթապարբերությամբ սահմանված կարգով՝ անհապաղ, այնուամենայնիվ, համապատասխան ձեռնարկության նկատմամբ սույն Հրահանգի կիրառման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում:»:

գ) 4-րդ պարբերության մեջ «երկրորդ, երրորդ և չորրորդ պարբերություններին» արված հղումը դառնում է համապատասխանաբար «երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ պարբերություններ».

դ) 9(6) հոդվածը լրացնել հետևյալ կետով՝

«դ) Մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը հրավիրվում է վերանայելու առկա «Անվտանգության վերաբերյալ հաշվետվություն կազմելու ուղեցույցը»՝ սերտորեն համագործակցելով անդամ պետությունների հետ:»:

6. 11-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) 1-ին պարբերության (ա) և (բ) կետերը լրացնել հետևյալ պարբերությամբ՝

«-սույն Հրահանգի գործողության ոլորտում հետագայում ներգրավման ենթակա ձեռնարկությունների դեպքում՝ 2(1) հոդվածի առաջին ենթապարբերությամբ սահմանված կարգով՝ անհապաղ, այնուամենայնիվ, համապատասխան ձեռնարկության նկատմամբ սույն Հրահանգի կիրառման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում:»:

բ) 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Չհակասելով իրավասու մարմինների պարտավորություններին՝ անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որ սույն Հրահանգով նախատեսված ներքին արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրերը կազմվեն՝ խորհրդակցելով ձեռնարկության ներսում աշխատող անձնակազմի հետ, այդ թվում նաև՝ երկարաժամկետ համապատասխան ենթակապալի պայմանագրերով աշխատող

անձնակազմի հետ, իսկ արտաքին արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրերը մշակելիս կամ թարմացնելիս՝ հանրության հետ:»:

զ) ավելացնել հետևյալ պարբերությունը՝

«4ա. Արտաքին արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրերի առնչությամբ անդամ պետությունները պետք է հաշվի առնեն խոշոր արտակարգ իրավիճակների ժամանակ քաղաքացիական պաշտպանության աջակցության գործում ընդլայնված համագործակցության խթանման անհրաժեշտությունը:»:

7.12-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) 1-ին պարբերության երկրորդ ենթապարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրենց հողօգտագործման և(կամ) այլ համապատասխան քաղաքականության մեջ, ինչպես նաև այն իրականացնելու համար նախատեսված ընթացակարգերում երկարաժամկետ կտրվածքով հաշվի առնվի սույն Հրահանգով կարգավորվող ձեռնարկությունների և բնակելի տարածքների, շենքերի և հասարակական օգտագործման տարածքների, հնարավորության դեպքում՝ գլխավոր տրանսպորտային ճանապարհների, հանգստի և զվարճանքի համար նախատեսված տարածքների, հատուկ հետաքրքրություն ներկայացնող կամ զգայուն բնական գոտիների միջև համապատասխան հեռավորություն պահպանելու անհրաժեշտությունը, իսկ գործող ձեռնարկությունների դեպքում՝ 5-րդ հոդվածի համաձայն, հաշվի առնվեն հավելյալ տեխնիկական միջոցներ՝ մարդկանց համար վտանգը չավելացնելու նպատակով:»:

բ) ավելացնել հետևյալ պարբերությունը՝

«1(ա) Մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը հրավիրվում է անդամ պետությունների հետ սերտ համագործակցությամբ կազմելու տվյալների բազա սահմանող ուղեցույց, որը կներառի վտանգի վերաբերյալ տվյալներ և վտանգի սցենարներ, որոնք կարող են օգտագործվել սույն Հրահանգով կարգավորվող ձեռնարկությունների և 1-ին պարբերության մեջ նկարագրված տարածքների համատեղելիությունը որոշելիս: Այդ տվյալների բազան սահմանելիս պետք է հնարավորինս հաշվի առնվեն իրավասու մարմինների կողմից կատարված գնահատումները, օպերատորների կողմից ստացված և համապատասխան բոլոր մյուս տեղեկությունները, օրինակ՝ կառույցի սոցիալ-տնտեսական արտոնությունների և արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրերով ապահովվող մեղմացուցիչ ազդեցությունների վերաբերյալ:»:

8. 13-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) 1-ին պարբերության առաջին ենթապարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հասարակությանը սպասարկող հաստատություններին (ինչպիսիք են դպրոցները և հիվանդանոցները), որոնք կարող են ենթարկվել 9-րդ հոդվածով կարգավորվող ձեռնարկություններում սկիզբ առած խոշոր վթարի ազդեցությանը, առանց վերջիններիս պահանջի, կանոնավոր և առավել նպատակահարմար կերպով տեղեկություններ տրամադրվեն՝ վթարի դեպքում անվտանգության միջոցների և անհրաժեշտ վարքագծի մասին:»:

բ) 6-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Այն դեպքում, երբ ձեռնարկությունների նկատմամբ գործում են 9-րդ հոդվածի դրույթները, անդամ պետությունները հանրության համար պետք է ապահովեն 9(2)

հողվածով նախատեսված վտանգավոր նյութերի ցանկի մատչելիությունը՝ պահպանելով սույն հոդվածի 4-րդ պարբերության և 20-րդ հոդվածի դրույթները»:

9. 19-րդ հոդվածում ավելացնել հետևյալ պարբերությունը՝

«1ա. Անդամ պետությունները, սույն Հրահանգով կարգավորվող ձեռնարկությունների առնչությամբ, պետք է Հանձնաժողովին տրամադրեն առնվազն հետևյալ տեղեկությունները՝

ա) օպերատորի անունը կամ առևտրային անվանումը և համապատասխան ձեռնարկության ամբողջական հասցեն և

բ) ձեռնարկության գործունեությունը կամ գործունեության տեսակները:

Հանձնաժողովը պետք է կազմի անդամ պետությունների կողմից տրամադրված տեղեկությունները պարունակող տվյալների բազա և թարմացնի այն: Տվյալների բազա մուտք գործելու իրավունքը պետք է վերապահվի Հանձնաժողովի կամ անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից լիազորված անձանց»:

10. I հավելվածում կատարել հավելվածում նշված փոփոխությունները:

11. II հավելվածում, IV կետի Բ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Բ. Սահմանված խոշոր վթարների հետևանքների չափի ու խստության գնահատում՝ ներառյալ քարտեզները, նկարները կամ՝ հարկ եղած դեպքում, համարժեք նկարագրություններ, որտեղ ցույց կտրվեն ձեռնարկությունում առաջացած այդ վթարների ազդեցությանը ենթարկվելիք տարածքները, որոնք կարգավորվում են 13(4) և 20-րդ հոդվածների դրույթներով»:

12. III Հավելվածի (գ) կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) (i) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«i) կազմակերպությունը և անձնակազմը՝ խոշոր վթարների կառավարման գործում ներգրավված անձնակազմի դերը և պարտականությունները՝ կազմակերպության բոլոր օղակներում: Այդ անձնակազմի վերապատրաստման անհրաժեշտության նախանշումը և այդպես նախանշված վերապատրաստման անցկացումը: Ձեռնարկության աշխատակիցների և ենթակապալի պայմանագրերով աշխատող անձնակազմի ներգրավվածությունը»:

բ) (v) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«v) արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանավորում՝ պարբերաբար կատարվող վերլուծության միջոցով կանխատեսելի արտակարգ իրավիճակների որոշման, այդ արտակարգ իրավիճակներին արձագանքելու նպատակով արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրերի պատրաստման, փորձարկման ու վերանայման և համապատասխան անձնակազմի համար հատուկ վերապատրաստումների ապահովման ընթացակարգերի ընդունում և իրականացում: Նման վերապատրաստում պետք է անցնի ձեռնարկության ամբողջ անձնակազմը՝ ներառյալ համապատասխան ենթակապալի պայմանագրերով աշխատող անձնակազմը»:

Հոդված 2

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի պահանջները կատարելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը գործողության մեջ են դնում նախքան 2005 թվականի հուլիսի 1-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից նշված ակտերի ընդունման դեպքում դրանցում պետք է հղում պարունակվի սույն Հրահանգին, իսկ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում դրանք պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղումներ կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է ներկայացնեն ազգային իրավունքի հիմնադրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 3

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրը:

Հոդված 4

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2003 թվականի դեկտեմբերի 16-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Պ. Քոքս

Խորհրդի կողմից՝

Նախագահ Գ. Ալեմաննո

1) ՊՏ C 75 E, 26.03.2002թ., էջ 357 և ՊՏ C 20 E, 28.01.2003թ., էջ 255:

2) ՊՏ C 149, 21.06.2002թ., էջ 13:

3) Եվրոպական պառլամենտի 2002 թվականի հուլիսի 3-ի եզրակացություն (ՊՏ C 271 E, 12.11.2003թ., էջ 315), Խորհրդի 2003 թվականի փետրվարի 20-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 102 E, 29.04.2003թ., էջ 1) և Եվրոպական պառլամենտի 2003 թվականի հունիսի 19-ի դիրքորոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում): Եվրոպական պառլամենտի 2003 թվականի նոյեմբերի 19-ի օրենսդրական որոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել) և Խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 1-ի որոշում:

4) ՊՏ L 10, 14.01.1997թ., էջ 13:

5) ՊՏ C 65 E, 14.03.2002թ., էջ 382:

6) ᄠS L 297, 15.11.2001ᄠ., ᄠᄠ 7:

ՀԱՎԵԼՎԱԾ

96/82/ԵՀ հրահանգի I հավելվածում սույնով կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Ներածությունը լրացնել հետևյալ կետերով՝

«6. Սույն Հրահանգի նպատակներով՝ գազ է համարվում ցանկացած նյութ, որի գոլորշու բացարձակ ճնշումը 20° ջերմաստիճանի պայմաններում 101,3 կիլոպասկալին հավասար կամ ավելի է:

7. Սույն Հրահանգի նպատակներով՝ հեղուկ է համարվում ցանկացած նյութ, որը սահմանված չէ որպես գազ և որը 20° ջերմաստիճանում ու 101,3 կիլոպասկալ ստանդարտ ճնշման տակ պինդ վիճակում չի գտնվում:»:

2. 1-ին մասի աղյուսակում՝

ա) «ամոնիումի նիտրատի» վերաբերյալ տվյալները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ամոնիումի նիտրատ (տես՝ 1-ին ծանոթագրությունը)	5 000	10 000
Ամոնիումի նիտրատ (տես՝ 2-րդ ծանոթագրությունը)	1 250	5 000
Ամոնիումի նիտրատ (տես՝ 3-րդ ծանոթագրությունը)	350	2 500
Ամոնիումի նիտրատ (տես՝ 4-րդ ծանոթագրությունը)	10	50»

բ) հետևյալ տվյալներն ավելացվում են «ամոնիումի նիտրատի» վերաբերյալ տվյալներից հետո.

«Կալիումի նիտրատ (տես՝ 5-րդ ծանոթագրությունը)	5 000	10 000
Կալիումի նիտրատ (տես՝ 6-րդ ծանոթագրությունը)	1 250	5 000»

գ) «Հետևյալ ՔԱՂՑԿԵՂԱԾԻՆ ՆՅՈՒԹԵՐՈՂ» տվյալը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հետևյալ ՔԱՂՑԿԵՂԱԾԻՆ նյութերը՝ ըստ կշռի 5 տոկոսից ավելի կոնցենտրացիաներով. 4-ամինոբիֆենիլ և (կամ) դրա աղերը, Բենզոնեքլորիդ, Բենզիդիլ և (կամ) աղերը, Բիս (քլորմեթիլ) էթեր, Քլորմեթիլի մեթիլային էթեր, 1,2-դիբրոմեթան, Երկէթիլսուլֆատ, Երկմեթիլսուլֆատ, Երկմեթիլ կարբամոիլի քլորիդ, 1,2-դիբրոմ-3-քլոր-պրոպան, 1,2-դիմեթիլ-հիդրոգին, Դիմեթիլնիտրոզամին, Հեքսամեթիլ ֆոսֆորային տրիամիդ, Հիդրոգին, 2-նաֆթիլամին և (կամ) աղերը, 4-Նիտրո-դիֆենիլ և 1,3 պրոպանսուլտոն	0,5	2»
---	-----	----

դ) «ավտոմեքենաների համար նախատեսված բենզինի և այլ տեսակի նավթի լուծիչների վերաբերյալ տվյալը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Նավթամթերք. ա) բենզին և նավթ, բ) կերոսին (այդ թվում՝ ռեակտիվ շարժիչների վառելիք), գ) գազային յուղեր (այդ թվում՝ դիզելային վառելիք, վառարանային կենցաղային վառելիք և գազային յուղի խառնուրդի հոսք)	2 500	25 000»
--	-------	---------

ե) i) 1-ին և 2-րդ ծանոթագրությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

1. Ամոնիումի նիտրատ (5000/10000)՝ պարարտանյութեր, որոնք կարող են ինքնաքայքայվել.

Սա կիրառվում է ամոնիումի նիտրատի հիմքով բարդ/ բաղադրյալ պարարտանյութերի նկատմամբ (ամոնիումի նիտրատի հետ ֆոսֆատ և(կամ) ածխաթթու կալիում պարունակող բարդ/ բաղադրյալ պարարտանյութեր), որոնցում ազոտի բաղադրությունը, որպես ամոնիումի նիտրատի արդյունք,

տատանվում է 15,75 % (1) 24,5 % (2) միջև՝ ըստ կշռի, կամ պարունակում է 0,4 %-ը չգերազանցող այրվող/ օրգանական նյութեր կամ որոնք բավարարում են 80/876/ԵՏՀ հրահանգի II հավելվածի պահանջները:

– կազմում է 15,75 % (3)՝ ըստ կշռի կամ պակաս և անսահմանափակ այրվող նյութեր,

որոնք կարող են ինքնաքայքայվել՝ համաձայն ՄԱԿ-ի փորձաստուգման (տես՝ Վտանգավոր ապրանքների փոխադրման վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության առաջարկությունները)՝ Փորձաստուգումների և չափանիշների ուղեցույց, Մաս III, ենթաբաժին 38.2):

2. Ամոնիումի նիտրատ (1250/5000)՝ Պարարտանյութի կատեգորիան

Սա կիրառվում է անմիջապես ամոնիումի նիտրատի հիմքով պարարտանյութերի և ամոնիումի նիտրատի հիմքով բարդ/ բաղադրյալ պարարտանյութերի նկատմամբ, որոնցում ազոտի բաղադրությունը՝ որպես ամոնիումի նիտրատի արդյունք

– գերազանցում է 24,5 %-ն ըստ կշռի, բացառությամբ ամոնիումի նիտրատի և դոլոմիտի, կրաքարի և(կամ) կալցիումի կարբոնատի հետ առնվազն 90 % մաքրությամբ խառնուրդների,

– գերազանցում է 15,75 %-ը՝ ըստ կշռի՝ ամոնիումի նիտրատի և ամոնիումի սուլֆատի խառնուրդներում,

– գերազանցում է 28 % (4) ըստ կշռի՝ ամոնիումի նիտրատի և դոլոմիտի, կրաքարի և (կամ) կալցիումի կարբոնատի հետ առնվազն 90 % մաքրությամբ խառնուրդներում,

և որոնք բավարարում են 80/876/ԵՏՀ հրահանգի II հավելվածի պահանջները:

3. Ամոնիումի նիտրատ (350/2500)՝ տեխնիկական կատեգորիա

Սա կիրառվում է՝

– ամոնիումի նիտրատի և ամոնիումի նիտրատի պատրաստուկների նկատմամբ, որոնցում ազոտի բաղադրությունը՝ որպես ամոնիումի նիտրատի արդյունք

տատանվում է 24,5 %-ից 28 % միջև՝ ըստ կշռի, և որոնք պարունակում են ոչ ավելի, քան 0,4 % այրվող նյութեր,

– գերազանցում է 28 %-ը՝ ըստ կշռի և որոնք պարունակում են ոչ ավելի, քան 0,2 % այրվող նյութեր,

– ամոնիումի նիտրատի ջրային լուծույթների նկատմամբ, որոնցում ամոնիումի նիտրատի խտությունն ավելի քան 80 % է՝ ըստ կշռի:

4. Ամոնիումի նիտրատ (10/50)՝ մասնագրերին/սպեցիֆիկացիաներին չհամապատասխանող նյութ և դետոնացիոն բնութագրերի որոշման փորձարկումը չանցած պարարտանյութեր

Սա կիրառվում է՝

– արտադրական պրոցեսի ժամանակ խոտանված նյութերի և ամոնիումի նիտրատի ու ամոնիումի նիտրատի պատրաստուկների, անմիջապես ամոնիումի նիտրատի հիմքով պարարտանյութերի և ամոնիումի նիտրատի հիմքով բարդ/ բաղադրյալ պարարտանյութերի նկատմամբ, որոնք նշված են 2-րդ և 3-րդ ծանոթագրություններում, որոնք վերջնական սպառողից վերադարձվում կամ վերադարձվել են արտադրողին, ժամանակավոր պահեստավորման կամ վերամշակող կայան՝ լրամշակման, վերամշակման կամ մաքրման համար՝ անվտանգ օգտագործելու նպատակով, քանի որ դրանք այլևս չեն համապատասխանում 2-րդ և 3-րդ ծանոթագրություններում նշված մասնագրերին/սպեցիֆիկացիաներին:

- 1-ին ծանոթագրության առաջին պարբերություն և 2-րդ ծանոթագրությունում նշված պարարտանյութերի նկատմամբ, որոնք չեն բավարարում 80/876/ԵՏՀ հրահանգի II հավելվածի պահանջները:

5. Կալիումի նիտրատ (5000/10000)՝ Բաղադրյալ կալիումի նիտրատի հիմքով՝ պարարտանյութեր, որոնք բաղկացած են կալիումի նիտրատից՝ գրանուլացված/հատիկավոր տեսքով:

6. Կալիումի նիտրատ (1250/5000)՝ Բաղադրյալ կալիումի նիտրատի հիմքով պարարտանյութեր, որոնք բաղկացած են կալիումի նիտրատից՝ բյուրեղացված տեսքով:

ii) պոլիբլորացված երկբենզոֆուրաններին և պոլիբլորացված երկբենզոդի օքսիններին վերաբերող ծանոթագրությունը դառնում է 7-րդ ծանոթագրությունը :

iii) հետևյալ ծանոթագրությունները երևում են «Թունավորության միջազգային համարժեք գործակիցներ (ITEF) մտահոգություն առաջացնող նմանատիպ նյութեր (NATO/CCMS)» վերնագրված աղյուսակի ներքևում :

«1) 15.75 % ազոտի բաղադրությունն ըստ կշռի՝ ամոնիումի նիտրատի արդյունքում համապատասխանում է 45 % ամոնիումի նիտրատի

2) 24.5 % ազոտի բաղադրությունն ըստ կշռի՝ ամոնիումի նիտրատի արդյունքում համապատասխանում է 70 % ամոնիումի նիտրատի

3) 15.75 % ազոտի բաղադրությունն ըստ կշռի՝ ամոնիումի նիտրատի արդյունքում համապատասխանում է 45 % ամոնիումի նիտրատի

4) 28 % ազոտի բաղադրությունն ըստ կշռի՝ ամոնիումի նիտրատի արդյունքում համապատասխանում է 80 % ամոնիումի նիտրատի»:

3. 2-րդ մասում՝

ա) 4-րդ և 5-րդ տվյալները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. ՊԱՅԹՈՒՑԻԿ (տես՝ 2-րդ ծանոթագրությունը), որտեղ նյութը, պատրաստուկը կամ առարկան նշված են UN/ADR 1.4 բաժնում	50	200
5. ՊԱՅԹՈՒՑԻԿ (տես՝ 2-րդ ծանոթագրությունը), որտեղ նյութը, պատրաստուկը կամ առարկան նշված են հետևյալ բաժիններից որևէ մեկում. UN/ADR Բաժիններ 1.1, 1.2, 1.3, 1.5 կամ 1.6 կամ դիսկի ծածկագիր R2 կամ R3	10	50»

բ) 9-րդ տվյալը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՌԻՍԿԻ ԾԱԾԿԱԳՐԵՐ		
i) R50՝ «Շատ թունավոր՝ ջրային օրգանիզմների համար» (ներառյալ R50/53)	100	200
ii) R51/53՝ «Վտանգավոր՝ ջրային օրգանիզմների համար. ջրային միջավայրում կարող է առաջացնել երկարատև բացասական ազդեցություններ»	200	500»

գ) Ծանոթագրություններում՝

թ) 1-ին ծանոթագրությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

1. Նյութերը և պատրաստուկները դասակարգված են համաձայն հետևյալ Հրահանգների և նրանց ընթացիկ հարմարեցումը կատարվել է տեխնիկական առաջընթացին համապատասխան՝

«Վտանգավոր նյութերի դասակարգման, փաթեթավորման և պիտակավորման հետ կապված օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկման մասին» Խորհրդի 1967 թվականի հունիսի 27-ի 67/548/ԵՏՀ հրահանգ (1):

«Վտանգավոր պատրաստուկների դասակարգման, փաթեթավորման և պիտակավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1999 թվականի մայիսի 31-ի 1999/45/ԵՀ հրահանգ (2):

Այն դեպքում, երբ նյութերը և պատրաստուկները, որոնք վերոնշյալ ոչ մի հրահանգի համաձայն դասակարգված չեն որպես վտանգավոր, օրինակ՝ թափոնները, սակայն որոնք այնուամենայնիվ առկա են, կամ հավանական է, որ առկա լինեն ձեռնարկությունում և որոնք՝ ձեռնարկությունում ստեղծված պայմաններում ունեն կամ հնարավոր է, որ ունեն խոշոր վթարի հավանականություն ստեղծող հատկությունների համարժեք հատկություններ, պայմանական դասակարգման ընթացակարգերը պետք է պահպանվեն՝ համապատասխան Հրահանգի համապատասխան հոդվածի համաձայն:

Այն դեպքում, երբ նյութերն ու պատրաստուկներն ունեն այնպիսի հատկանիշներ, որոնք գտնվում են ոչ միայն մեկ դասակարգման տակ, սույն Հրահանգի նպատակներով պետք է կիրառվեն ամենացածր հատուկ քանակությունները: Սակայն, 4-րդ ծանոթագրության

մեջ նշված կանոնի կիրառման համար օգտագործվող հատուկ քանակությունը միշտ պետք է համապատասխանի տվյալ դասակարգմանը: Սույն Հրահանգի նպատակներով՝ Հանձնաժողովը պետք է կազմի և թարմացված պահի այն նյութերի ցուցակը, որոնք դասակարգվել են վերը նշված կատեգորիաներում՝ 67/548/ԵՏՀ հրահանգին համապատասխան, ներդաշնակեցված որոշման համաձայն:»:

ii) 2-րդ ծանոթագրությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. «պայթուցիկ» նշանակում է՝

– նյութ կամ պատրաստուկ, որը պայթյունի վտանգ է ստեղծում ցնցումի, շփման, հրդեհի կամ բռնկման այլ աղբյուրների միջոցով (ռիսկի ծածկագիր R2),

– նյութ կամ պատրաստուկ, որը պայթյունի վտանգ է ստեղծում ցնցումի, շփման, հրդեհի կամ բռնկման այլ աղբյուրների միջոցով (ռիսկի ծածկագիր R3), կամ

– նյութ, պատրաստուկ կամ առարկա, որը կարգավորվում է «Ավտոճանապարհով վտանգավոր բեռների միջազգային փոխադրումների մասին» Եվրոպական համաձայնագրի 1-ին Դասով (UN/ADR), որը կնքվել է 1957 թվականի սեպտեմբերի 30-ին, փոփոխվել և փոխաստեղծվել է «Ավտոճանապարհով վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների մոտարկման մասին» Խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 21-ի 94/55/ԵՀ հրահանգով (3):

Այս սահմանման մեջ ներառված են այն պայթուցիկները, որոնք սույն Հրահանգի նպատակներով սահմանված են որպես նյութեր (կամ նյութերի խառնուրդներ), նախատեսված ջերմություն, լույս, ձայն, գազ կամ ծուխ կամ այդ հետևանքների համակցություն արտադրելու համար՝ ինքնուրույն ջերմազատիչ քիմիական ռեակցիաներ առաջացնելու միջոցով: Եթե նյութը կամ պատրաստուկը դասվել է ինչպես UN/ADR դասին, այնպես էլ R2 և R3 ռիսկի ծածկագրերի կարգին, ապա UN/ADR դասակարգումը պետք է գերակայի ռիսկերի ծածկագրի նկատմամբ:

1-ին դասում նշված նյութերը և առարկաները դասակարգվում են 1.1-ից մինչև 1.6-ն ընկած ցանկացած բաժնում՝ UN/ADR դասակարգման սխեմայի համաձայն: Համապատասխան բաժիններն են՝

Բաժին 1.1՝ «Նյութեր կամ առարկաներ, որոնք զանգվածային պայթյունի վտանգ են պարունակում (զանգվածային պայթյունը այն պայթյունն է, որն ազդում է գրեթե ամբողջ բեռնվածությամբ, ըստ էության, ակնթարթորեն)»:

Բաժին 1.2՝ «Նյութեր ու առարկաներ, որոնք պարունակում են նետման, սակայն ոչ զանգվածային վտանգ»:

Բաժին 1.3՝

«Նյութեր և առարկաներ, որոնք հրդեհի և փոքր պայթյունի կամ փոքր նետման վտանգ են պարունակում կամ երկուսը միասին, սակայն ոչ զանգվածային պայթյունի վտանգ՝

ա) որոնց այրումն առաջացնում է ճառագայթման հետևանքով առաջացող բավականաչափ ջերմություն կամ

բ) որն այրվում է մեկը մյուսի ետևից՝ առաջացնելով փոքր բռնկման կամ պրոյեկցիոն ազդեցություններ, կամ երկուսը՝ միասին»:

Բաժին 1.4՝ «Նյութեր և առարկաներ, որոնք ընդամենը թեթև վտանգ են պարունակում բռնկման կամ տեղափոխության ընթացքում շփման հետևանքով: Ազդեցությունները հիմնականում սահմանափակվում են փաթեթավորմամբ և չի ակնկալվում բավականին

մեծ չափի և մասշտաբի բաղադրիչների նետում: Արտաքին միջավայրից կրակը չպետք է առաջացնի փաթեթի գրեթե ամբողջ պարունակության ակնթարթային պայթյուն»:

Բաժին 1.5 ` «Շատ անզգայուն նյութեր, որոնք զանգվածային պայթյունի վտանգ են պարունակում, սակայն այնքան անզգայուն են, որ շատ քիչ է այրումից պայթյունի առաջացման կամ վերածվելու հավանականությունը` տեղափոխման բնականոն պայմաններում: Որպես նվազագույն պահանջ` դրանք չեն պայթում արտաքին հրակայունության փորձարկման ժամանակ»:

Բաժին 1.6 «Չափազանց անզգայուն առարկաներ, որոնք զանգվածային պայթյունի վտանգ չեն պարունակում: Այդ առարկաները պարունակում են միայն չափազանց անզգայուն պայթուցիկ նյութեր և բռնկման ու տարածման չնչին հավանականություն ունեն: Վտանգը սահմանափակվում է մեկ առարկայի պայթյունով»:

Սույն սահմանման մեջ են մտնում նաև առարկայի պարունակության մեջ առկա` բռնկվող կամ հրավառ նյութերը կամ պատրաստուկները: Այն դեպքում, երբ առարկաները պարունակում են բռնկվող կամ հրավառ նյութեր կամ պատրաստուկ, և հայտնի է այդ նյութերի կամ պատրաստուկի քանակությունը, ապա այդ քանակությունը պետք է հաշվի առնվի սույն Հրահանգի նպատակներով: Եթե հայտնի չէ այդ քանակությունը, ապա սույն Հրահանգի իմաստով, ամբողջ առարկան պետք է դիտվի որպես պայթուցիկ»:

iii) 3(բ)(1) ծանոթագրության մեջ երկրորդ պարբերությոը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

« - նյութեր և պատրաստուկներ, որոնց բռնկման միավորը ցածր է 55° C-ից և որոնք ճնշման տակ շարունակում են մնալ հեղուկ վիճակում, երբ հատուկ մշակման պայմանները, ինչպիսիք են բարձր ճնշումը կամ բարձր ջերմաստիճանը, կարող են խոշոր վթարի վտանգ պարունակել»:

iv) 3(գ)(2) ծանոթագրությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

«2. գազեր, որոնք դյուրավառ են` շրջակա միջավայրի ջերմաստիճանում և ճնշման տակ օդի հետ շփման մեջ մտնելու դեպքում (ռիսկի ծածկագիր R12, երկրորդ պարբերությո), և որոնք գտնվում են գազային կամ գերկրիտիկական վիճակում:

v) 3(գ)(3) ծանոթագրությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

«3. դյուրավառ և չափազանց դյուրավառ հեղուկ վիճակում գտնվող նյութեր և խառնուրդներ, որոնք պահպանվում են եռման աստիճանից բարձր ջերմաստիճանում»:

vi) 4-րդ ծանոթագրությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

«4. Այն դեպքում, երբ ձեռնարկությունում առկա չեն վերոնշյալ քանակությամբ կամ համապատասխան հատուկ քանակությանը համարժեք առանձին նյութեր կամ պատրաստուկներ, հետևյալ կանոնը պետք է կիրառվի` որոշելու, թե արդյոք ձեռնարկությունը կարգավորվում է սույն Հրահանգին համապատասխան պահանջներով»:

Սույն Հրահանգը կիրառվում է, եթե $q1/QU1 + q2/QU2 + q3/QU3 + q4/QU4 + q5/QU5 + \dots$ գումարն ավելի մեծ է կամ հավասար է 1-ի,

որտեղ qx -ը = վտանգավոր նյութի քանակություն x (կամ վտանգավոր նյութերի կատեգորիան), որը նշված է սույն Հավելվածի 1-ին կամ 2-րդ մասերում,

իսկ $QUX =$ նյութի կամ կատեգորիայի համապատասխան հատուկ քանակություն x ՝ 1-ին կամ 2-րդ մասերի 3-րդ սյունակից:

Սույն Հրահանգը կիրառվում է, բացառությամբ 9-րդ, 11-րդ և 13-րդ հոդվածների, եթե $q1/QL1 + q2/QL2 + q3/QL3 + q4/QL4 + q5/QL5 + \dots$ մեծ է կամ հավասար է 1-ի,

որտեղ $qx =$ վտանգավոր նյութի քանակություն x (կամ վտանգավոր նյութերի կատեգորիան), որը նշված է սույն Հավելվածի 1-ին կամ 2-րդ մասերում,

իսկ $QLX =$ նյութի կամ x կատեգորիայի համապատասխան հատուկ քանակություն՝ 1-ին կամ 2-րդ մասերի 2-րդ սյունակից:

Սույն կանոնը կիրառվում է թունավորման, դյուրավառության և էկո-թունավորման ընդհանուր վտանգը գնահատելու համար: Հետևաբար, այն պետք է կիրառվի երեք անգամ՝

ա) 1-ին մասում նշված և որպես թունավոր կամ շատ թունավոր դասակարգված նյութերը և պատրաստուկները՝ 1-ին կամ 2-րդ կատեգորիաներին դասվող նյութերին և պատրաստուկներին լրացնելու համար,

բ) 1-ին մասում նշված և որպես օքսիդացնող, պայթուցիկ, դյուրավառ, շատ դյուրավառ կամ չափազանց դյուրավառ դասակարգված նյութերը և պատրաստուկները 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7 ա), 7 բ) կամ 8-րդ կատեգորիաներին դասվող նյութերին և պատրաստուկներին լրացնելու համար,

գ) 1-ին մասում նշված և որպես շրջակա միջավայրի համար վտանգավոր դասակարգված (R50 (ներառյալ R50/53) կամ R51/53) նյութերը և պատրաստուկները՝ 9(i) կամ 9(ii) կատեգորիաներին դասվող նյութերին և պատրաստուկներին լրացնելու համար.

Սույն Հրահանգի համապատասխան դրույթները կիրառվում են, եթե ա), բ) կամ գ) կետերում նշված կարգով ստացված ցանկացած գումար մեծ կամ հավասար է 1-ի:

vii) հետևյալ ծանոթությունները երևում են ծանոթագրությունների վերջում՝

«1) ՊՏ 196, 16.08.1967թ., էջ 1: Թիվ 807/2003 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 122, 16.05.2003թ., էջ 36):

2) ՊՏ L 200, 30.07.1999թ., էջ 1: Հանձնաժողովի 2001/60/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 226, 22.08.2001թ., էջ 5):

3) ՊՏ L 319, 12.12.1994թ., էջ 7: Հանձնաժողովի 2003/28/ԵՀ հրահանգով (ՊՏ L 90, 08.04.2003թ., էջ 45) վերջին անգամ փոփոխված հրահանգ»: